«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Լուսինե Հովհաննիսյան

Մանկապարտեզ՝ Ախուրյան « Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1 Դերային խաղի առանձնահատկությունները և կարևորությունը 5

1.1 Դերային խաղի էությունը.....5

1.2 Դերային խաղի տեսակները և անցկացման փուլերը.....7

ԳԼՈՒԽ 2 Հետազոտության ընթացքը 10

Պարապմունքի պլան 10

Եզրակացություն 13

Գրականության ցանկ 14

Ներածություն

Դերայի խաղը հատուկ տեղ է զբաղեցնում երեխաների զարգացման գործում: Նախադպրոցական հաստատություններում խաղ կազմակերպելիս ժամանակակից ուսուցիչը հաշվի է առնում դրա ձևավորման առանձնահատկությունները և երեխաների զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

Նախադպրոցական տարիքում խաղը դառնում է առաջատար գործունեությունը, բայց ոչ այն պատճառով, որ ժամանակակից երեխան, որպես կանոն, իր ժամանակի մեծ մասն անցկացնում է իրեն զվարճացնող խաղերով, այլ խաղը որակական փոփոխություններ է առաջացնում երեխայի ներաշխարհում:

Ինչպես նշում է Վ. Ա. Սուխոմլինսկի «Խաղը կայծ է, որ հարցասիրության և հետաքրքրասիրության կրակ է վառում»:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, որը ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Խաղի միջոցով երեխան ճանաչում է իրեն շրջապատող այն երևույթները, որոնք ի հայտ են գալիս խաղային իրավիճակներում: Խաղը բացի ժամանցային բնույթ կրելուց, այն ունի նաև դաստիարակչական, ուսուցողական նշանակություն, այն հանդես է գալիս որպես միջոց, մեթոդ գիտելիքը տեղ հասցնելու համար:

Դերային խաղը ուսուցման հարստացման միջոց է: Երեխաներին առաջարկում են անսպասելի իրավիճակներ, ստանձնում որևէ դեր կամ ընդունում որևէ տեսակետ, փորձում դա հասունացնել և ավարտել:

Խաղի զարգացման գործընթացում երեխաները պարզ, տարրական, պատրաստի սյուժեներից անցնում են բարդ, ինքնուրույն հորինված սյուժեների՝ ընդգրկելով իրականության գրեթե բոլոր ոլորտները: Նրանք սովորում են խաղալ ոչ թե միմյանց կողքին, այլ նրանց հետ, տիրապետում են խաղի կանոններին և սկսում հետևել դրանց :

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

Հետազոտական աշխատանքի արդյունքում կարող ենք տեսնել, թե դերային խաղի կազմակերպումը աշակերտների մոտ ինչ կարողությունների զարգացման կնպաստի:

Հետազոտական աշխատանքի խնդիրն է հասկանալ որոնք են դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1 Դերային խաղի առանձնահատկությունները և կարևորությունը

1.1 Դերային խաղի էությունը

Խաղը առանձնահատուկ տեղ է գրավում նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում: Երեխայի զարգացման համար մանկավարժության մեջ մեծ նշանակություն ունեն խաղի ինքնուրույն ձևերը: Նման խաղերում երեխայի անհատականությունն առավել լիարժեք է դրսևորվում, հետևաբար խաղը համակողմանի զարգացման միջոց է (մտավոր, գեղագիտական, բարոյական, ֆիզիկական): Տեսականորեն խաղը դիտվում է տարբեր տեսանկյունից: Փիլիսոփայական մոտեցման տեսանկյունից մանկական խաղը աշխարհին տիրապետելու հիմնական միջոցն է, որը նա անցնում է իր սուբյեկտիվության պրիզմայով: Խաղացողը այն մարդն է, ով ստեղծում է իր աշխարհը, ինչը նշանակում է, որ նա ստեղծագործ մարդ է: Հոգեբանության տեսանկյունից նշվում է խաղի ազդեցությունը երեխայի ընդհանուր մտավոր զարգացման վրա՝ նրա ընկալման, հիշողության, երևակայության, մտածողության ձևավորման վրա. դրա կամայականության զարգացմանը: Սոցիալական ասպեկտը դրսևորվում է նրանով, որ խաղը սոցիալական փորձի յուրացման ձև է, դրա զարգացումը տեղի է ունենում երեխաների շրջապատող մեծերի ազդեցության ներքո[1]:

Երեխան հասարակության անդամ է և հասարակությունից դուրս ապրել չի կարող[2]: Նրա հիմնական պահանջմունքն է ապրել շրջապատող մարդկանց հետ: Երեխան շրջապատող աշխարհի հետ գտնվում է միջնորդավորված կապի մեջ: Այդ կապն իրականացվում է սյուժետադերային խաղի միջոցով: Խաղը երեխայի գործունեության առաջատար ձևն է: Խաղը հենց այն գործունեության ձևն է, որով երեխան սկզբում էմոցիոնալ, իսկ հետո ինտելեկտուալ ձևով յուրացնում է մարդկային հարաբերությունների ողջ համակարգը:

Ըստ Էլկոնինի խաղը պատմական ծագում ունի այն առաջ է եկել պատմական ծագման որոշակի փուլում, երբ դրվել է մեծերի աշխարհի և երեխայի աշխարհի բաժանման հիմքը: Տարանջատվում է մանկական աշխարհը մեծերի աշխարհից և

---

[1] Х. А. Михайловна, Игра в дошкольном возрасте, 2012

[2] Մ.Սիմոնյան, « Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության Բարելավման միջոց », Երևան 2004թ

վերջինս երեխայի համար դառնում է իդեալ և երեխաները իրենց խաղի մեջ այդ աշխարհը սիմվոլիկ իրականություն են դարձնում:

Դերային խաղը ուսուցման կամ փորձի հարստացման միջոց է: Խմբի մասնակիցները առաջարկում են անսպասելի իրավիճակներ, ստանձնում որևէ դեր կամ ընդունում որևէ տեսակետ, այնուհետև փորձում դա հասունացնել և ավարտել[3]: Դերային խաղից մեծ օգուտ քաղելու համար պետք է առաջարկվող իրավիճակները հնարավորինս մոտ լինեն իրականությանը: Անհրաժեշտ է բավարար ժամանակ տրամադրել դերային խաղ- կերպարները նկարագրելուն և համոզվել, որ խաղի համար ստեղծված պայմանները առավելագույնս համապատասխանում են մասնակիցների հիմնական գործունեությանը:

Դերային խաղի մեծամասնությունը իր կառուցվածքում ներառում է հետևյալ բաղադրիչները[4]՝

Դերային խաղի հրահանգում պետք է մանրամասն ներգրավվեն իրավիճակի բոլոր կողմերը: Միաժամանակ հրահանգը պետք է խիստ սահմանափակումներ չունենա, որպեսզի չխանգարի մասնակիցներին այդ դերն իրենց պատկերացումներին

[3] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ
[4] Т.В. Емельянова, Г.А. Медяник , Игровые технологии в образовании, ФГБОУ впо «Тольяттинский государственный университет», 2015

համապատասխան խաղալու: Դերային խաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ:

1.2 Դերային խաղի տեսակները և անցկացման փուլերը

Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե ժամանցի, այլ գործնական բազմափուլ աշխատանքի, որի յուրաքանչյուր փուլ լուծում է կոնկրետ նպատակներ: Հետևաբար, անհրաժեշտ է հանգամանորեն պլանավորել դերային խաղը՝ նախապես սահմանելով նպատակ, ձևակերպելով չափելի վերջնարդյունքներ[5]:

Առանձնացվում է դերային խաղի 2 տեսակ՝ ուղղորդված և հանպատրաստից՝ դասակարգման հիմքում դնելով սովորողների ակտիվ կամ պասիվ որոշում կայացնելու հանգամանքը: Ուղղորդված դերային խաղի արդյունավետությունը ապահովելու համար դրանք պետք է լինեն մանրակրկիտ ծրագրված և լավ ուղղորդված: Կարևոր է առաջադրանքը սկսելուց առաջ անդրադառնալ հետևյալ հարցերին.

- Ինչի՞ն է նպաստում դերախաղի կազմակերպումը:
- Որո՞նք են դերախաղի նպատակն ու խնդիրները:
- Որո՞նք են դերախաղի ընդհանուր կանոնները:
- Որո՞նք են դերախաղի փուլերը:

Հանպատրաստից դերախաղի դեպքում հակառակը՝ պետք է ապահովել սովորողների առավելագույն ազատություն:

Դերային խաղեր կազմակերպելիս անհրաժեշտ է հետևյալն կանոններին[6]՝

- *Մշակել մանրակրկիտ պլան:*

Դերային խաղի գրագետ իրականացումը օգտակար է մասնակիցների համար: Այն ցանկալի է անցկացնել դասընթացի մոտտավորապես մեջտեղում, երբ խումբը պատրաստ է հաղթահարել դասընթացի սկզբին բնորոշ դիմադրությունը:

- *Դերային խաղը անցկացնել տեղին:*

Դերային խաղի արդյունավետությունը պայմանավորված է նրա կենսականությամբ և նոր ապրումներով: Դա նշանակում է, որ մեթոդը պետք է

[5] https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_23.html 28.11.23
[6] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ

կիրառել զգույշ: Եթե խաղեր անցկացվեն յուրաքանչյուր պատեհ- անպատեհ առիթներով դրանք կարժեզրկվեն:

- *Ցանկալի է, որ խմբերը փոքր լինեն:*

Արդեն նշվել է դերային խաղի նկատմամբ դիմադրության հաղթահարման մասին: Այդ գործընթացին օգնում է խմբի մասնակիցների փոքրաթիվությունը: Խմբի փոքրաթիվ լինելը նպաստում է հանգիստ, ոչ ֆորմալ միջավայրի ստեղծմանը:

- *Ստեղծագործաբար կիրառել դերային խաղը:*

Ցանկալի է գործընթացն այնպես կառուցել, որ տեսական մասին հետևի դերային խաղը, որը հնարավորություն կտա գործնականում կիրառել նոր սովորածը:

Դերախաղերը սովորաբար իրականացվում են 3 փուլով՝ նախապատրաստման, բուն խաղի և անդրադարձի[7]:

Առաջին ՝ նախապատրաստման փուլում քննարկվում են այն կանոնները, որոնք պետք է պահպանվեն դերային խաղի ընթացքում: Բաժանվում են դերերը, նշանակվում են դիտորդները և ստանում դիտարկման հստակ առաջադրանք: Դերակատարները կարդում/մտածում են իրենց դերերի մասին:

Երկրորդ ՝ խաղի փուլում խաղացողները ստանձնում են իրենց դերերը և կատարում դրանք՝ կախված իրավիճակից՝ կիրառելով ձեռք բերված հմտությունները: Մյուսները կատարում են իրենց դիտորդական հանձնարարությունը:

Երրորդ՝ անդրադարձի փուլում խաղացողներն առաջին հերթին արտահայտում են խաղի ընթացքում իրենց ունեցած զգացմունքները: Դիտորդները ներկայացնում են իրենց դիտարկումները: Հետո խոսվում է դերախաղի ժամանակ կայացրած որոշումների ու գործողությունների մասին, և աշխատանքն ամփոփվում է եզրակացություններով:

Խաղերից շատերին բնորոշ է հետևյալ հատկանիշները[8]՝

- Ազատ զարգացող գործունեություն, որը կիրառվում է միայն ցանկությամբ գործընթացից հաճույք ստանալու, այլ ոչ թե խաղի արդյունքից:
- Ստեղծագործական՝ զգալի երևակայության օգտագործում, որը բնավորություն է այդ գործընթացում:

[7] https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_23.html 28.11.23
[8] https://www.maam.ru/detskijsad/igrovye-tehnologi-v-detskom-sadu-810043.html 28.11. 23

- Գործողության զգացմունքայինի բարձրացում, մրցակցություն, խաղի բնույթի զարգացում, զգացմունքների ազդեցությամբ:
- Խաղի անմիջական և երկրորդայինի ազդեցությունը, խաղի տրամաբանությունը և ժամանակի զգացումը:

Դերային խաղի արդյունավետությունը ապահովելու համար հարկավոր է, որ ուսուցիչը հասկանալի և պարզ ձևակերպի խաղի հրահանգները, դերերի վերաբերյալ ցուցումները շարադրի այնպես, որ սովորողները անձնական նախաձեռնության հնարավորություն ունենան: Միաժամանակ այնպիսի պահանջներ դնի, որոնք կնպաստեն ուսումնական նպատակին հասնելուն, խաղն ընտրի տարիքային խմբին համապատասխան, նախապատրաստի համապատասխան պարագաներ և այլն:

ԳԼՈՒԽ 2 Հետազոտության ընթացքը

Հետազոտական աշխատանքս կազմակերպել ու իրականացրել եմ ավագ խմբում: Խմբում կա 28 երեխա: Այս պարապմունքը դիտել են՝ տնօրենը և մեթոդիստը:

Պարապմունքի պլան

Թեման – Հ. Թումանյան «Պոչատ աղվես» հեքիաթը

Տեսակը - Խոսքի զարգացում՝ ինտերակտիվ խաղի միջոցով

Նպատակը՝

- Երեխաները կարողանում են կերտել տարբեր կերպարներ, վերապրել նոր զգացողություններ և կիսել իրենց տպավորությունները (ի՞նչն է իրենց մեջ տպավորվել, ի՞նչը չեն հավանել և այլն),
- Զարգացնել այնպիսի հաղորդակցման հմտություններ, ինչպիսիք են դերախաղը, գործնական և ընկերական հաղորդակցությունը,
- Նպաստել անձի բոլոր որակների՝ անհատական դրական և բացասական ընդունակությունների արտահայտմանը,
- Նպաստել ուսումնական գործընթացի մասնակիցների՝ առավել մեծ թվով ընդգրկմանը, նրանց մղել ակտիվության,
- Զարգացնել ստեղծագործությունների իմաստը ըմբռնելու և բովանդակությունը հուզականորեն արտահայտելու կարողությունը,
- Երեխանները սովորում են հաղթահարել կյանքի դժվարին իրավիճակները: Արդյունքում երեխաների մեջ դաստիարակվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են՝ աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, վճռականությունը և պատասխանատվության զգացումը:

Նյութ՝

- Հեքիաթի հերոսների կերպարներ
- Տարբեր անհրաժեշտ պարագաներ՝ ուլունքներ, կուժ, ձու, կաթ և այլն
- Գունավոր մատիտներ, ֆլոմաստերներ, պաստառներ:

Ընթացքը

Մինչ դերային խաղը սկսելը երեխաների հետ վերհիշում ենք հեքիաթի բովանդակությունը: Կիրառում եմ մտագրոհ մեթոդը, տալիս եմ երեխաներին հինգ րոպեանոց ազատ շարադրանք: Տրվում են հեքիաթի բովանդակությանը վերաբերող հարցեր:

- Ի՞նչու էր աղվեսը պոչատ
- Ինչպես՞ էր փորձում աղվեսը հետ ստանալ պոչը:
- Պառավը ի վերջո տվեց արդյոք պոչը հետ:

Հանձնարարում եմ աշակերտներին միացնել հեքիաթի գծապատկերները: Խաղը անցկացնելու համար խումբը բաժանել 3-4 ենթախմբերի՝ յուրաքանչյուր ենթախմբում 6-7 երեխա: Երեխաները պետք է մասերից ստանան ամբողջական պատկերները: Յուրաքանչյուր երեխա հավաքելու է հեքիաթի մեկ հերոսի պատկեր: Ստացված ամբողջական պատկերները դասավորում են այն հերթականությամբ, ինչպես տրված է հեքիաթում:

Առաջադրանքը կատարելուց հետո անցնում ենք հաջորդ փուլին: Խաղի մասնակիցները պետք է ստանան վերջում աղվեսին իր պոչով: Խաղը վերջացնելուց հետո աշակերտները փորձում են մեկնաբանել, թե ինչ սովորեցին խաղից, արդյոք հանդիպեցին դժվարությունների, ինչպես կարողացան օգնել մեկը մյուսին:

Արդյունքում երեխաներն կարողացան ուշադրությունը կենտրոնացնելով հավաքել հերոսների ամբողջական պատկերները, հավաքեցին պատկերը այնպես, ինչպես տրված էր հեքիաթում:

Իսկ վերջում բոլոր երեխաները միասին դերերով փոքրիկ ներկայացում կազմակերպեցին: Դերերը բաշխեցինք այնպես, որ յուրաքանչյուր երեխա որոշակի մասնակցություն ունենար ներկայացմանը:

Դերային խաղի արդյունում մեծացավ երեխաների ակտիվությունը և երեխաների մոտ հեքիաթի խրատական բնույթն ավելի ըմբռնելի եղավ:

Պարապմունքին ներկա էին երկու դիտարկողներ, որոնք եկան հետևյալ եզրակացությանը՝

- Երեխաներն կարողանում էին համագործակցել միմյանց հետ, ակտիվությունը մեծ էր դերային խաղի ընթացքում:
- Երեխաների մի մասը դժվարանում էին հարցերին պատասխանելու ընթացքում, սակայն ընդհանուր առմամբ արագ էին կարողանում կողմնորոշվել:
- Հեքիաթը հարուստ էր դերային կերպարներով, հագուստներով, զարդարանքներով: Երեխաները իրենց զգում էին անկաշկանդ:
- Հեքիաթի վերլուծության արդյունքում երեխաները հասկանում են, որ պետք է զողություն չանել, լինել պատասխանատու և գնահատել յուրաքանչյուրի ստեղծածի արժեքը:

Եզրակացություն

Այսպիսով՝ դերային խաղը ուսուցման և փորձի ձեռքբերման արդյունավետ ձևերից մեկն է: Սեփական ապրումներն հիշվում են երկար ժամանակ: Խաղի ընթացքում երեխաները ճանաչում են իրենց, շրջապատող աշխարհը, ձևավորվում են հիմնական հասկացություններ մարդկային հարաբերությունների մասին: Դերային խաղի ճիշտ օգտագործումը մեծապես կնպաստի երեխային ոչ միայն ապագայում դպրոցին պատրաստվելու, այլև դպրոցում արագ ընտելացմանը:

Դերային խաղերը կրթական այլ միջոցների հետ համատեղ հիմք են հանդիսանում ներդաշնակորեն զարգացած ակտիվ անհատականության ձևավորման համար, ով կարող է ելք գտնել կրիտիկական իրավիճակից, որոշումներ կայացնել, նախաձեռնություն վերցնել, այսինքն՝ ձեռք բերել այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են ապագա կյանքում:

Այս թեմայի շրջանակներում խորհուրդ կտամ դատիարակներին, որ այս մեթոդով աշխատելիս շեշտեն խաղի իրականացման կարևորությունը, որը հնարավորություն կտա ամրապնդել վարքի տարբեր մոդելներ և կնպաստի երեխաների աշխարհաճանաչմանը:

Գրականության ցանկ

- Մ.Սիմոնյան, « Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության Բարելավման միջոց », Երևան 2004թ
- Ուսուցման ժամանկակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ
- Х. А. Михайловна, Игра в дошкольном возрасте, 2012
- Т.В. Емельянова, Г.А. Медяник , Игровые технологии в образовании, ФГБОУ впо «Тольяттинский государственный университет», 2015
- https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_23.html 28.11.23
- https://www.maam.ru/detskijsad/igrovye-tehnologi-v-detskom-sadu-810043.html 28.11. 23